

<<Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն>> // գիտամեթոդական
հոդվածների ժողովածու - Երևան, 2008, #7, էջ 42 - 44

Լոգոպեդական խորհուրդներ աֆազիա ունեցող հիվանդների հարազատներին

Աֆազիա հիվանդների և նրանց հարազատների հետ շփման հաստատունը համարվում է խոսքի վերականգնման հիմնական խնդիրներից մեկը:

Կարևոր է ամեն ինչ. լոգոպեդի ժպիտը, դեմքի ու աչքերի արտահայտությունը, առողջանությունը, հարցերի միջև սահմանվող դադարները և այլն:

Անհրաժեշտ է հանդիպել հիվանդի հարազատների հետ և տեղեկություններ հավաքել նրա մասին՝ ինչպիսին էր նա մինչ հիվանդությունը (կրթությունը, մասնագիտությունը, աշխատանքը, բնավորության գծերը), կան արդյոք «արգելված» թեմաներ, որոնց չարժե անդրադառնալ հիվանդի հետ աշխատելիս: Կարևոր է պարզել նաև հիվանդի ու նրա մտերիմների փոխհարաբերությունների բնույթը՝ դրանք վերականգնողական աշխատանքին ծառայեցնելու համար:

Որպես կանոն, աֆազիայով հիվանդին շրջապատող մարդիկ չգիտեն, թե ինչպես նրա հետ շփվեն. խոսում են չափազանց բարձր ձայնով, «որպեսզի ավելի լավ լսի ու հասկանա», հիվանդին թույլ չեն տալիս խոսել կամ էլ շարունակ ստիպում են կրկնել ձիշտ արտասանած բառը: Խոսել են «սովորեցնում» Այբբենարանով կամ այլ մանկական գրքերով, առաջարկում են միտքն արտահայտել գրելով, և այդ ժամանակ բացահայտվում է, որ հիվանդը չի կարողանում ո չ կարդալ, ո չ գրել:

Այսպիսի մոտեցումները ոչ միայն բարդացնում են լոգոպեդի աշխատանքը, այլև հոգեբանական հարված են հասցնում աֆազիայով հիվանդին: Բնական է, որ հիվանդի հարազատները, որոնք չունեն հատուկ կրթություն, չեն կարող և չպետք է լուծեն վերականգնողական աշխատանքի խնդիրները, սակայն մասնագետի ղեկավարությամբ ու հսկողությամբ կարող են նպաստել հիվանդի առողջացմանն ու վերականգնմանը:

Մենք մշակել ենք խորհուրդներ, որոնք նախատեսված են աֆազիայով հիվանդի հարազատների համար.

«Գլխուղեղի ծանր վնասվածքի հետևանքով ձեզ մտերիմ մարդը զրկվել է խոսելու կարողությունից: Խոսքի կորստի՝ աֆազիայի հետևանքով խանգարվել է ոչ միայն սեփական խոսքը, այլև խոսքի ընկալումը, գիրը, ընթերցանությունը և հաշվողական գործընթացները: Շիվանդի խոսքը վերականգնման կարիք ունի, որն իրականացնում է լոգոպեդը: Սակայն այդ աշխատանքում հիվանդին կարող եք օգնել նաև դուք:

Ուստի՝ խորհուրդ ենք տալիս.

- Մի՛ լռեք, խոսե՛ք հիվանդի հետ, նրան որևէ հետաքրքիր բան պատմեք, մշտապես մեկնաբանեք ձեր և նրա գործողությունները:
- Խոսեք հանգիստ, դանդաղ՝ խոսքը զուգակցելով համապատասխան ժեստերով ու դիմախաղով: Մի՛ բղավեք, մի՛ շատախոսեք, մի՛ շտապեցրեք հիվանդին պատասխանել Ձեր հարցերին:
- Խնդրեք հիվանդին որևէ բան անել: Սկսեք պարզ հրահանգներից, օրինակ՝ փակել աչքերը, բարձրացնել ձեռքը, թեքել գլուխը և այլն:
- Դրդեք հիվանդին ինքնուրույն կատարել որևէ գործողություն: Մի՛ արեք նրա փոխարեն այն, ինչ ինքն ի վիճակի է ինքնուրույն կատարել, օրինակ՝ սանրվել, ուտել, խմել, անձեռոցիկով մաքրել բերանը և այլն:
- Շաճախակի գովեք հիվանդին, նշեք յուրաքանչյուր, թեկուզ շատ փոքրիկ դրական տեղաշարժերը, որոնք վերաբերում են նրա ինքնագզացողությանը, բուժմանը, ընդհանուր, այդ թվում՝ խոսքային վերականգմանը:
- Շիվանդի ներկայությամբ երբեք մի՛ խոսեք նրա համար տհաճ թեմաներով, մի՛ հայտնեք ձեր երկմտությունը նրա լիարժեք վերականգնման վերաբերյալ, նույնիսկ եթե կարծում եք, որ նա Ձեզ չի հասկանում:
- Շիվանդին պատմեք իր հիվանդության մասին, բայց մի՛ հայտնեք նրան Ձեր ապրումներն ու զգացողությունները: Շակառակ դեպքում՝ հիվանդությունը կարծես «կենդանանում» է: Պատմեք նրան իր այսօրվա առողջական վիճակի, դրական հեռանկարների մասին:
- Վերականգնողական աշխատանքի սկզբնական շրջանում աշխատեք խիստ սահմանափակել հիվանդին այցելողների թիվը: Շետագայում ցանկալի են միայն ամենամտերիմ և հիվանդին հաճելի մարդկանց այցելությունները: Զգուշացրեք նրանց, որ ողջ խոսքային

ծանրաբեռնվածությունը պետք է իրենց վրա վերցնեն. հարցեր տան, բայց, եթե հիվանդը դժվարանում է, իրենք էլ նրա փոխարեն պատասխանեն:

- **Շիվանդի համար ստեղծեք հեռուստա- և ռադիոհաղորդումներ լսելու հնարավորություն, քանի որ դա բարենպաստ կերպով է ազդում խոսքի ըմբռնման վերականգնման վրա:**
- **Ներկա գտնվեք հիվանդի հետ տարվող լոգոպեդական պարապմունքներին: Աշխատեք յուրացնել խոսքի վերականգնման որոշ հնարներ: Դրանք Ձեզ կցուցադրի և կսովորեցնի լոգոպեդը:**
- **Շիվանդի հետ շփվելիս խուսափեք այնպիսի բառերից, ինչպիսիք են «դաս», «ուսուցիչ», «թվանշան»: Փորձը ցույց է տալիս, որ այսպիսի կատակ-համեմատությունները հիվանդի վրա բացասաբար են անդրադառնում, երբեմն նույնիսկ հիվանդը հրաժարվում է լոգոպեդական պարապմունքներից:**
- **Մի՛ փորձեք հիվանդին խոսել սովորեցնել Այբբենարանով կամ այլ մանկական գրքերով: Մի՛ խնդրեք բազմակի անգամ կրկնել այն բառերը, որոնք նրան հաջողվել է ձիշտ ասել: Այդպիսի հնարները վնասում են խոսքի վերականգմանը:**
- **Շիվանդին մշտապես տեղեկացրեք, թե շաբաթվա որ օրն է այսօր, հիշեցրեք առաջիկա 1 2 ժամվա համար նախատեսված ծրագրերի մասին: Երեկոյան նրա հետ միասին հաջորդաբար վերականգնեք օրվա իրադարձությունները:**
- **Շիվանդին հաճախակի ասեք, որ հավատում եք նրա ուժերին և կօգնեք ապաքինվել: Ձեր հավատը կօգնի նրան ավելի արագ վերականգնվել:**
- **Խոսքի վերականգնման ժամկետները պայմանավորված են գլխուղեղի ախտահարման առանձնահատկություններով: Եղեք համբերատար և հաստատակամ:»**